

# ՄԵԾ, ԱՆԴԱՌՆԱԼԻ ԿՈՐՈՒՍՏ

Այս օրերին մեծ ագի մեջ է ողջ հայ ժողովուրդը Մայր Հայրենիքում և ի ափյուռս աշխարհի: Ժողովուրդը խոր վշտով վերջին հրաժեշտը տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին՝ երկնքի ընտրյալին ու Աստծո մարդուն, որը շուրջ 40 տարի հայ կյանքի բարդ վայրիվերումների այս դժվարին ժամանակներում ազգի ժակատագրի համար մեծագույն պատասխանատվությամբ ու անօրինակ շրջահայեցությամբ, պատվով ու վեհությամբ կրեց հայրապետական ծանր ու սուրբ գավազանը: Դիպուկ է ասել հայ մեծ փիլիսոփան. «Լավ և փորձված նավապետը երևում է ոչ թե հանդարտ ծովում, այլ ալեկոծության ժամանակ, իսկ վեհագույն հոգիներն էլ երևում են փորձությունների ժամանակ»: Երջանկահիշատակ Վեհափառ Հայրապետն իր ողջ ուժերն ու իմաստությունն աննախադեպ նվիրումով ի սպաս դրեց ազգի տարանջատ ուժերի համախմբման հայրենանվեր նպատակին:

«Մեծ է զօրս զայս և երկինք կա մեզ ունկնդիր». Նշանավոր քերթողի այս խոսքերով ասես հաղորդակցվում ենք երկնքի ու երկնային հոգիների հետ և ցավ ի սիրտ խորհում, որ այլևս մեզ հետ չէ մեր ժամանակի բացառիկ ինքնօրինակ ու անկրկնելի անհատականություններից մեկը՝ մեր բոլորիս շատ սիրելի, պաշտելի ու խնկելի Վեհափառ Հայրապետը, որի զգայուն ու դյուրախոց սիրտը դադարեց բաբախելուց, և նրա անմահ հոգին գնաց միանալու բոլոր ժամանակների մեծ հայկազունների հոգիների հետ:

Անամոք ագի այս վշտաբեր օրերին վերհիշենք, թե ինչպիսի՞ վիթխարի վերելք ապրեց Մայր Աթոռը Վազգեն Ա-ի արդյունաշատ կաթողիկոսության տարիներիին, ինչպիսի արժանի համաշխարհային համբավի արժանացավ Վեհափառ Հայրապետը՝ իր արտասովոր կազմակերպական, ազգապահպանման, մտավոր-մշակութային ու կառուցողական եռանդուն գործունեության շնորհիվ, որի համար և նրան առաջինը շնորհվեց Հայաստանի Հանրապետության հերոսի բարձր կոչումը:

Առանց դույզն ինչ վերապահության կարելի է ասել, որ Հայոց 130 Կաթողիկոսների մեջ Վազգեն Ա-ն իրավամբ նվաճեց ամենաերևելիների շարքը դասվելու անվիճելի իրավունքը:

Ամենաբարձր գնահատանքի է արժանի նաև Վազգեն Ա-ի գրականահրապարակախոսական և գիտական պատկառելի վաստակը, որի համար էլ նա, հուրախություն բոլորիս, ընտրվեց Հայաստանի Հանրապետության ազգային ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս: Վեհափառն իր խորիմաստ ելույթներով մշտապես հիացնում էր մեզ բոլորիս: Մեր հիշողության մեջ տակավին թարմ է, մասնավորաբար, անմահ Հայրապետի վերջին արթնամիտ ելույթը ակադեմիայի ընդհանուր ժողովում, ուր նա նախանձելի իմաստությամբ ու նրբամտությամբ մեկնաբանեց հայոց գիտական կաճառին տրված «ազգային» անվանումը:

Եթե «վեհափառ» բառը ընկալենք ածականի առումով, ապա Հայ Առաքելական Եկեղեցու գործիչների մեջ ըստ երևույթին այնքան էլ հաճախ չենք հանդիպի անձի ու գործի այդպիսի վեհաշուք ու գեղեցիկ ներդաշնակության:

Անչափելի, անափ է, իրոք, մեր կորուստը, բայց համազգային ագի այս ծանր օրերին գլխահակ ողբալու հետ միասին, մեզ պիտի մխիթարենք ոչ միայն Վեհափառի ծանրավաստակ գործի վիթխարիության գիտակցությամբ, այլև այն հույսով ու հավատով, որ այդ գործը անպայման կունենա իր արժանի շարունակությունը:

Վազգեն Ա-ի վառ, առինքնող կերպարը հավերժ կապրի բոլորիս սրտերում:

**ՎԱՉԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**